# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Մ.Խորենացու 3,7 հասցեում, ստորև ներկայացնում է 5764 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի արդյունքում 2009թ-ի դեկտեմբերի 24-ին կնքված պայմանագրում 2018թ-ի մարտի 22-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: 2018թ-ին մատուցվելիք ծառայության դիմաց նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման նպատակով 22.03.2018թ-ին կնքվել է համաձայնագիր: Միաժամանակ 24.12.2009թ-ին կնքված թիվ 5764 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածվել են 2018թ-ի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման համար 2018թ-ի ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Սպարտակ Հարությունյանին:

Հեռախոս՝ 060 544 703:

Էլ. փոստ՝ spartakharutyunyan76@mail.ru:

Պատվիրատու՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Նոտարական ակտի կոդ: 600-20180321-117-2342593
Նոտարական ակտի գաղտնագիր: 8PTKZ0

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4

24.12.2009թ. կնքված և սեղանամատյանում թիվ 5764 համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
Ք. ԱԲՈՎՅԱՆ, ՄԱՐՏԻ ՔՍԱՆԵՐԿՈՒՍԻՆ 22/03/2018թ.
ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆՈՒԹ ԹՎԱԿԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ, Իրավաբանական հասցեն՝ ք. Աբովյան , Բարեկամության 1, ի դեմս Աբովյան համայնքի ղեկավար ՎԱՀԱԳՆ ԺԻՐԱՅՐԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ, ծնված՝ 08.12.1975թ, որը գործում է համաձայն կանոնադրության, Անձնագիր՝ AK 0531349 տրված 15.06.2010թ 019-ի կողմից, Բնակվող՝ ք. Աբովյան, Սարալանջ փողոց, 26 շենք, բն. 32, այսուհետ՝ <ՎԱՐՁԱՏՈՒ>
և
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՆ» ի դեմս աշխատակազմի ղեկավար ԱՐՏԱԿ ՍԱՐԻԲԵԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ, ծնված՝ 20/02/1975թ-ին, ՀԾՀ՝ 3002750492, նույնականացման քարտ՝ 006016653, տրված՝ 011-ի կողմից, 24/02/2017թ-ին, հաշվառված՝ ԼՈՌԻ, ՎԱՆԱՁՈՐ, ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ Փ., 6 Շ, 15ԲՆ , որի անունից լիազորագրով հանդես է գալիս ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի գործերի կառավարման վարչության շինարարական ծրագրերի համակարգման բաժնի ճարտարագետ-շինարար Արթուր Լևոնի Եղիազարյանը /ծնված 21.02.1994թ., նույնականացման քարտ 006196521, տրված 17.07.2017թ., 005 ի կողմից /այսուհետ՝ <ՎԱՐՁԱԿԱԼ> մյուս կողմից,

ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 24.12.2009թ. կնքված և սեղանամատյանում թիվ 5764 համարով գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում /այսուհետ՝ պայմանագիր/ փոփոխություն կատարելու մասին 07.04.2014 թ-ին կնքված թիվ 1 համաձայնագրի 1-ին կետի գ/ ենթակետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին՝
1.1 Հաստատել 2018թ. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի:
1.2 Սույն համաձայնագրով նախատեսված պայմանները տարածվում են կողմերի միջև 2018թ. հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:
2. Այլ պայմաններ
2.1. Պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:
2.2. Սույն համաձայնագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս /4/ հավասարազոր օրինակից: Համաձայնագրի մեկ օրինակը պահվում է Նոտարի գործերում, իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին:
2.3. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
2.4. Սույն համաձայնագրի հավելված 1-ը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը:

ՎԱՐՁԱՏՈՒ
ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնք
Հասցե՝ ք. Աբովյան, Բարեկամության հր. 1
ՀՎՀՀ 03502073 Հ/Հ 900105201322
ՀՀ ՖՆ ԿԳ ԳՎ
Աբովյան համայնքի ղեկավար -----------------------------------------------Վ. Գևորգյան
(ստորագրություն)

ՎԱՐՁԱԿԱԼ
ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3, 7
ՀՎՀՀ 02647057 Հ/Հ 900011054013
Կենտրոնական գանձապետարան Գործառնական վարչություն
ի դեմս աշխատակազմի ղեկավար Արտակ Սահակյանի լիազորված անձ
Արթուր Եղիազարյան, նույնականացման քարտ 006196521,
տրված 17.07.2017թ. 005-ի կողմից

------------------------------------------------------------------------------------ Ա. Եղիազարյան
(ստորագրություն)

Արթուր Եղիազարյան

ԵՐԿՈՒ ՀԱԶԱՐ ՏԱՍՆՈՒԹ ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ ՔՍԱՆԵՐԿՈՒՍԻՆ, սույն համաձայնագիրը վավերացվել է, իմ՝ Հայաստանի Հանրապետության Կոտայք նոտարական տարածքի նոտար՝ Նունե Մանուչարյանիս կողմից: Սույն համաձայնագիրը կողմերը ստորագրել են իմ ներկայությամբ: Պարզված է համաձայնագիրը ստորագրողների ինքնությունը, նրանց գործունակությունը, իրավաբանական անձանց իրավունակությունը, նրանց ներկայացուցիչների լիազորությունները՝ ստուգված են:

Գրանցված է գրանցամատյանում՝ ------------1523------------ ով

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար չորս հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար ՆՈՒՆԵ ՄԱՐՏԻՆԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հավելված 1
24.12.2009թ. կնքված և սեղանամատյանում թիվ 5764 համարով
գրանցված անշարժ գույքի վարձակալության պայմանագրում
փոփոխություններ կատարելու մասին թիվ 4 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2018թ. պետական բյուջետային միջոցների հաշվին՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ծառայության անվանումը | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | ՀՀ ք. Աբովյան, Բարեկամության հր.1 հասցեում գտնվող վարչական շենքից 952.29քմ. տարածքի վարձակալություն | 476 000 | 713 000 | 951 000 | 1 189 000 | 1 427 000 | 1 665 000 | 1 903 000 | 2 141 000 | 2 379 000 | 2 855 000 | 2 855 000 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

«ՎԱՐՁԱՏՈՒ»

ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնք
Հասցե՝ ք. Աբովյան, Բարեկամության հր. 1
ՀՎՀՀ 03502073
Հ/Հ 900105201322
ՀՀ ՖՆ ԿԳ ԳՎ

Աբովյան համայնքի ղեկավար

__________ Վ. Գևորգյան

«ՎԱՐՁԱԿԱԼ»

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3, 7
ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
Կենտրոնական գանձապետարան
Գործառնական վարչություն
ի դեմս աշխատակազմի ղեկավար Արտակ Սահակյանի լիազորված անձ Արթուր Եղիազարյան, նույնականացման քարտ 006196521, տրված 17.07.2017թ. 005-ի կողմից

__________ Ա. Եղիազարյան
(ստորագրություն)

Արթուր Եղիազարյան